

ՀԱՐԻՒՄ ՏԱՐԻ ԱՌԱՋ (1799—1809)

Ա.

Կան ժամանակներ, երբ անցեալով զբաղուելն ա-
մենամիթարականն ու արդիւնաւորն է. կալծում եմ
թէ մեր ներկան ալդպիսի ժամանակներիցն է: Պիտի
խոստովանեմ սակայն, որ շատերն ալդպէս չեն մտա-
ծում. այն, ալդպէս չեն մտածում մանաւանդ մեր մա-
մուլի ներկալացուցիչները ¹⁾), թէպէտև ալդ աղքատիկ
պարբերական մամուլն իւր մէջ երեք ներկալացուցիչ
ունի հնութեան, բայց նրանց բնչն է Նէկուբան...
Դրանցից մէկը ուրարտեան իրբև թէ հայկական արձա-
նագրութիւններով է զբաղուած, միւս երկուքը երկար
ժամանակ Խորենացուց ալս կողմը հետաքրքրական ժա-
մանակ չէին գտնում, իսկ վերջերս անդրապաշաղիմա-
կան ձեւանալով՝ հին հեղինակութիւնները տապալելու
յետնիցն են, որ դրանց տեղը գնեն այն կուռքերն, ո-
րոնք ած տագնամ գլորիամ օքն արդէն ձանձրացըել են
բոլոր լուսաւոր ազգերին: Սակայն «Թոռլ տուք մեռե-
լոց թաղել զմեռեալսն իւրեանց», մեր առօրեալ կեանքն
այնքան ծանր ճնշման տակ է, որ ժամանակ անդամ
չունինք դրանցով զբաղուելու:

Եթէ մեր յամուլը ծանրատար ժանամակիս առաջ-
նորդ լինել և անցեալի խրատներով ներկան թեթևաց-
նել ջանար, ամեն անդամ որ և է տոհմական ծանրա-
կղիու խնդիր ծագած վալրկենին Կոլոմբոսի ձուկ առակը
մէջ տեղ չէր բերիլ...

1) Դրան պէտք է վերագրել անշուշտ «Դիւանի» Խ. գրքի
մասին լուսաւորիւնը:

Արեկի առկ նոր բան չը կայ, ասում է առածը,
որի մի ալլ ձեն է. ամենալն ինչ արդէն տեսել ենք:
Այն, մենք կարող ենք ասել, որ հայ ազգն ամենալն ինչ
տեսել է կամ ամեն ինչ անցել է հայի գլխով. սկսած
մեծափառ ասիական գերիշխանութիւնից¹⁾ մինչև յետին
սարկութեան վիճակը:

Սակայն ինչ է պատճառը, որ ալդքան բազմադի-
մի վիճակները մեզ չեն հասցըել ոչ երջանկութեան և
ոչ էլ կատարեալ կորստեան:

Ալդ հարցման պատասխանը պատմութիւնը վաղուց
է տուել. հայն անկարող է եղել երջանկութեան հաս-
նելու, որովհետև իւր ծննդեան օրերից սկսած եղել է
միայնակ և շըջապատուած զօրեղներից, իսկ կորստեան
չէ մատնուել, որովհետև իւր մէջ եղած ներքին, ոգեկան
զօրութեան շնորհիւ միշտքաղաքակիրթ ազգերի հետևորդ-
ների մէջ է գտնուել: Ահա հայոց ազգի պատմական
ազգ լինելու գաղանիքը, որ մեր ոխերիս թշնամիքն ան-
դամ չեն կարողանում հերքել և կամ հերքելու ճիգեր
թափելով միայն հաստատում են իրենց ատելի ճշմար-
տութիւնը: Այս խորհրդածութիւններն անդիմադրելի
ուժով զարթեցան կրկին, երբ սկսալ մեծահատոր «Դի-
ւանի» վերջին, Ե. Գերջը թերթելու բայց ոչ, թերթել
բառը անտեղի է, ես թէև մտադիր էի թերթել, բայց
ալդ չը լաջողեցաւ ինձ, ես ոչ միայն սկսալ կարդալ,
ալլ կլանել ալդ վեցհարիւրիցեան վաւերաթղթերի ժո-
ղովածուն, ինչպէս պատանի ընթերցողուհիք թերթում
են սիրոյ վիպասանութիւնները: Ալդ վաւերաթղթերի
ընթերցանութիւնը լանկարծ լափշակեց միտքս և ես
սկսալ իրեւ թատերասրահի հանդիսատես երկու հա-
մանման դրամաների ներկայացման ներկայ լինելս զգալ:
Անդադար իջնում և բարձրանում էին վարագոլընները,
գործող անձինք առանց դիմակի բեմ էին իջնում, խօ-
սում և գործում: Քանի գնում ընդարձակում էր բեմը,
նախ անցնում էին անհատներ, ապա խմբեր, կուսակ-

¹⁾ Թէպէտ պյտ փաստը չէ ընդունում մեր ժամանակա-
կից հրապարակագիր և ի գժբախտութիւն մեր և պատմագէտ
(sic!) պ. Լէօն. տես Յովսէփ կաթ. երես 2..

ցութիւններ, հոգեսոր և աշխարհական, պաշտօնեալք և պետեր, գնդեր և բանակներ,

Մի տասնամեալ շրջանում ահագին պատմական դրամաներ էին հանգուցւում, զարգանում և լուծւում. մանր ազգերն հանդէս էին գալիս նոր լոյսերով և մեռնում, իսկ հզօրներից հնագոյնները տեղի էին տալիս նորերին և կենսունակներին: Եւ այս ամենը տասնամեալ շրջանում: Լոկ պատմութիւնը, մի անհատի գրչի նկարագիրը, մի գիտնականի բազմամեալ և բազմակողմանի հետազոտութեան արդասիքն երբէք չի տալ մեզ այն կենդանի նկարագիրն, որ տալիս է այս թղթակցութիւնների ժողովածուն, որտեղ սառն, կեղծուպատիր պաշտօնագրերի հետ ունինք և այդ գիմակաւորների մերկանդամ պատկերը, նրանց մտերմական սրտի ծածուկ անկիւններից. բղխած անսուտ խոստովանութիւնները: Ահա շնորհիւ այս ներքին, մտերմական թղթակցութիւնների, մեր առաջ կանգնում ենք կամենում են այն պատմական անձինք, որոնց մենք ցարդ ճանաչում էինք միայն պաշտօնական համազեստներով:

Ահաւասիկ վերոյիշեալ դրամալի մի քանի գործողութիւններն և պատմական անձանց մի քանիսի պատկերներն ենք կամենում ներկալացնել ալստեղ, իրեւ զուգապատկեր մեր դարսկզբան:

Բ.

«Նալոց պատմութեան ՚Իրւանի» Ե. գիրքը ամփոփում է իւր մէջ լառաջաբանից զատ 253 թուղթ գրուած 1799 թ. նոյեմբերից մինչև 1809 թ. մայիսի 13 և մի յաւելուած ու յատուկ անուանց ցանկ. ընդամենն 700 իջեց աւելի: Այս թղթակցութիւնների նիւթն է Յովսէփ Արդութեան, Դանիէլ, ՚Իաւելիթ և Նիկոլա կաթողիկոսների ընտրութիւնը, ընդ որս և ժամանակի դէպքերի նկարագիրն, որոնցից գլխաւորն է Վրաստանի միացումն Ռուսիալի հետ, Պարսկաստանի և Տամկաստանի տկարանալին և Անդրկովկասի ոռւսական տիրապետութեան տակ մտնելը: Եւրոպական աշխարհադղորդ անցքերի արձագանքը գտնում ենք Նապօլէօն Ա.ին, և նրա

գեսպաններին ուղղուած թղթերի մէջ:

Հրատարակիչը զլացել է մեզ տալու իւր աղքիւրների մանրակրկիտ նկարագրերը, որ այսպիսի վաւերաթղթերի համար շատ անհրաժեշտ են, սակայն պատահական ծանօթութիւններից գուշակում ենք, որ այս ժողովածուն մեծաւ մասսմբ գործ է մի Դանիէլեան կուսակցի (Կ. Վ. Նահնազարեանի), որ կամեցել է ապագալից առաջ արդարացնել իւր համախոհներին: Անշուշտ խոստացուած երկհատոր ժողովածուն Դաւթի կոնդակների աւելի կը լուսաբանէ ժամանակս, սակայն արդէն հրատարակուածներն ևս բաւական են գործող անձանց պատկերները գծելու համար:

Թղթակցութիւններիս վերնագրերն և ստորև եղած ժանօթութիւններն Կ. Վ. Նահնազարեանի և մասսմբ Հ. Մկրեան քահանայի գրչի արդիւնք են, քանի մի անհրաժեշտ ծանօթութիւններ տալիս է նաև Դիւանի հրատարակիչն, որ սակայն, չեմ կարող չը խոստավանել, ժլատ է ալդ վերաբերմամբ: Թղթերի մէջ կան բազմաթիւ եղծուած բառեր, որոնց ուղղագրելու աշխատանքն յանձն է առել Հ. Մկրեանն, բայց ոչ միշտ լաջող: Այս եղծուած բառերի մէջ մի քանիսն ուղղակի անուշադրութեան սիսակներ են, յատուկ անուանց շփոթութեան և օտարազգի բառերի խանգարումն (օր. կավալէր, թաղի էջ 79, աշընքնդէն, որ Մկրեան հալրն էլինդէնս է ուղղագրութեան սիսակների մէջ 201, ալդ առածը շատ սովորական է «աշընդէն եմէդիմ, թիւստիանդէն քեօու օլդըմ»=ճաշիցը չը կերայ, բայց ծխիցը կուրացայ): Կարծում եմ, որ լզ. և լը նամակներից առաջինը սևագրութիւն է, երկրորդը բնագիրը, ծը թուղթը չէ կարող Մ. Եղիազարեանինը լինել, դա պէտք է Եփրեմ սրբազանինը լինի ևալին: Սակայն տեղը չէ ալդ բանասիրական մանրակրկիտ քննութեան, գոհ լինինք և շնորհապարտ, որ այս վաւերաթղթերը կորատի չեն մատնուած և մի սոսկականի շնորհիւ ազատուել են ցեցերից ու փոշուց և հասարակաց սեպհականութիւն դարձել:

Դիմենք ալժմ այն պատկերները դիտելու, որ նկառումնեն այս վաւերաթղթերը:

ՅՈՎԱՆԻՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԴՅՈՒԹԵԱՆ ¹⁾).

Տասնեւութերրդ գարավերջն է. 1799 թ. նոյեմբերի 27, Ղուկաս կաթողիկոսը մերձ ի մահ պառկած է. վեհարանում, կաթողիկոսի լաջորդի խնդիրն արդէն հրապարակէ հանուած, ամենքին լայտնի է, որ Ռուսաստանի առաջնորդ պետքանօքան Յովակիպովուար ժառանգ է Համարում իւր անձնագիր:

Երկու ամիս առաջ Ս. Եջմիածնից նույիրակ է գնացել Մուսիս, ալդ նույիրակն է Եփրեմ արհին, որ նոյնպէս թեկնածու է ս. Աթոռին։ Մերձի մահ կաթողիկոսն ևս լոյսեր է տուել Յովսէփ արհւոյն, նոյնը կրկնել է միաբանութեան Կողմից Եփրեմը Յօվսէփին։

1) Արդութեանի մահուան հարիւրամեկի առթիւ հրասա-
րակուեցաւ նրա երկու ընդարձակ կենսագրութիւնը, մին Լէօ-ի.
Հեղինակութեամբ, միւսը պ. և. Շահազիդի. Պ. և. Շահազիդն-
իրեն յատուկ ջանասիրութեամբ և մողուաջան եռանդով ի մի-
է ժողովել Յովսէփի արհւոյ կեանքի մասին այն տեղեկութիւն-
ները, որ վերաբերում են նա Նախիջևանին, իսկ պ. Լէօն Ճգնել.
Է Սանահնեցի արհւոյն ներկայացնել իրեւ մի նշանաւոր հայ
քաղաքագէտ. երկուսն ևս մեղմով են անցել նրա կաթուղիկո-
սութեան պատմութիւնը, որով յետե, ինչպէս կարծում եմ,
Յովսէփի կենսագրութեան մէջ դա փայլուն կէտ չէ, իսկ կեն-
սագիրները սովորաբար կարծես ակամայից պանեզիրիսսութ-
պարան են դառնում. Խնձ թւում է, որ Յովսէփի մի հատիկ-
թու զմէն աւելի կենդանի է պատկերացնում նրան, քան թէ
քաղմիշեան մի հատօր, ուր քաղաքական և իմաստափրական-
խորհրդածութիւնները դլիքաւոր աելին են րոնում. Դեռ ևս վա-
ղաժամ է Յովսէփի մասին դատապիճու կարդալը, նրա սեպհա-
կան թղթակցութիւնների և ժամանակակիցների վկայութիւն-
ների մի քառորդն անգամ լոյս չէ տեսել. Դիւնի թղթակցու-
թիւններից երկում է կաթողիկոսութեան տենչացող Յովսէփի,
բայց ինչ էր նա ի կենդանութեան կաթուղիկոսների և ինչ
Ճգուլմիներ ունէր, ակնարկներով միայն գիտենք, յամենայն.
գէպս դա մի անյատ փառակը անձն էր, որ շատ էլ իտրու-
թիւն չէր անում միջոցների, ինչպէս խոստովանում է պ. Լէօն.
Եր. 218.

Քսանեվեց երկար տարիք Յովսէփը Ոռւսիոյ հալոց առաջնորդ է, նրա փոքրիկ թեմն այժմ աճել և մեծացել է, Հաշտարխաննի փոքրիկ գաղութի առաջնորդն այժմ հոգեւոր և մարմնաւոր առաջնորդ է Ռուսիոյ բոլոր հոլերին, նրան են հպատակում բացի Հաշտարխանի, Պղարթի, Մողդոկի և մալրաքաղաքների հայերից և Նոր-Նախիջևանի, Գրիգորիուսիուսի, Ղրիմի, Մոլդո-Վալյախիոյ հայք, Ս. Էջմիածնից երեսնամեալ հասակում հեռացած նորբնծալ եպիսկոպոսն այսօր արդէն ամենքին լալանի է, Հնդկաստանից մինչեւ Բալկան, Պետերբուրգից մինչև Թէհրան ճանաչում են այն եպիսկոպոսին, որ քաղաքներ է հիմնում, եկեղեցիք է կանգնում, պալատներում և բանակներում իբրև փառահեղ իշխան շրջում և քաղաքական բանակցութիւններ է վարում։ Վրաստանի խաների գեսպանները նրա տակցութեամբ են գործ կատարում, Պարսկաստանի սահմանները կոխող զօրքը նրա ծրագրով է յառաջ ընթանում, Անդրկովկասեան խաները նրա միջնորդութեամբ են խօսում հիւսիսային մեծ հսկալի հետ, որ քայլ առ քայլ հարաւ է իջնում։ Ոռուսիոյ մէջ նա առաջնակարգ անձանց թւումն է, Լազարեանների շնորհիւ և նրանց տանը սեղանակից է նա նախարարների և արքունեաց սերելիներին, մի խօսքով նա մինն է այն հոգեւոր իշխանազուններից, որոնց տիպերը միայն միջնադժորեան Եւրոպայումն ենք տեսնում, որոնցից հայ ազգի մէջ կիլիկեան պահլաւունիներից յետոյ այլ ևս չենք տեսել։

Ալդ տեղիցն էլ նա սկսում է իւր ազգաբանութիւնը, նրա մէջ հասունացած և պատրաստ է այն միտքը, որ ինքն իշխանազուն, արքայական ցեղից ծագող Պահլաւունի է։ Նա շատ էլ չէ հոգում պատմական ստուգութեան մասին, վրաց արքունիքը վաւերացնում է նրա երկարնաբազուկ իշխանական ցեղն և ոռւսականն ընդունում է։

¹ Լուսաւորչի ցեղից սերելուն ինքը Յովսէփ արհին հաւատում է և ալլոց ևս հաւատացնում է... Իմացէք թէ զԱթուն զայն նոր շինէք, մուծանելով ի նմա ի ցեղէ լուսաւորչին ծերոյ սրբոյն Դրիգորի, յորմէ եմք մեք. զոր ողօրմութեան թագաւորն ևս հաստատեալ ի զա-

նազան պատմագրաց և ի գրութենէ արքալին վրաց՝ նորոգեաց զցեղն իմ և զտոհմակիցս կնքով Առտուածատիպ մատամբն հաստատեալ». (Էջ. 35. թուղթ ձԱ. 1800 թ. 23 III):

Հրաշալի է այդ լուսաւորչին ծնրոյ խօսքը. էջմիածնի մոնթը, Տաճիկ Շիօզի որդի (ՂԵ. էջ. 267). Ցովսէփն արդէն իրեն բռլորովին արքայազուն և պահլաւունի է կարծում և խորհուրդ է տալս հայերին իրենց լուսաւորչի գահի վրայ նստացնել իրեն:

Պօտէմկինի սեղանակից և բախտակից եպիսկոպոսը մալրաքաղաքում նստած ամեննեին կասկած անգամ չունի, որ իրեն պիտի հրաւիրեն հայրապետական գահը բարձրանալու, որովհետև այդ մասին նա վաղուց է հոգացել. «ըստ ամենալի իրաւանց իմ է ժառանգութիւն ի Սիմէօն կաթողիկոսէն մինչեւ ցարդ» (Էջ 28 ժԱ. նամակ):

Նետաքրքրական է, թէ ինչ փաստի վերալ է հիմնուած այդ ժառանգութիւնը, ինքն արհին չէ ասում այդ, իսկ ուրիշները չեն ընդունում նրա իրաւունքը: Երկի այդ ժառանգութիւնը նոյնպիսի պատմական հիմնաւոր փաստերի վրալ է հիմնուած, որպիսին և Ցովսէփի Լուսաւորչի ցեղից լինելը:

Քսանեհինդ տարի ուսուական արքունիքին մերձ լինելով և ապրելով Կատարինէ Բ-ի փալուն շրջանում, Ցովսէփ արհին շատ բան էր տեսել և շատ բան սովորել. նա տեսել էր կայսրների անկումն և բարձրացումն, առհմական ազնուականների կորուստն ու ոտնտակ լինելը, անտոհմիկ և ստոր ծագման մարդոց փառքի գագաթնակէտն հասնելը: Նա տկանատես և գործակից էր եղել քաղաքական բանակցութիւնների, մասնակցել էր խանների և արքաների գահընկեցութեան և գահհակալութեան, ուստի զարմանալի չէ, որ ամենալի ամբողուածնութեամբ հրաւիրում է հայերին իրեն տալ հայրապետական գահն, որին տիրելու համար նա շատ միջոցներ ունի իւր ձեռքին:

Անհատի զարգացումն, նրա աշխարհայեցութիւնը, ձգտումներն և իդէալները ծնունդ են շրջապատի. Ս. էջմիածնի համեստ մոնթը նկրտել էր իւր ժամանակի-

գիտութեան տէր վարդապետ դառնալ, ապա եպիսկոպոս աստիճանաւոր եկեղեցական, ապա նուիրակ և առաջնորդ. այս զարգացումն կանոնաւոր էր և այդ աստիճանաւորութեամբ էին զարգացած ժամանակի կուսակրօնները, սակայն Ռուսիոյ հայոց առաջնորդ գառնալուց լետոյ, նոր շրջապատ ու նոր ընժամացք ունեցաւ Յովսէփի զարգացումն: Հանգամանքների շնորհիւ նամերձեցաւ մի մեծազօր արքունիքի, ուր առաջնակարգ դեր կատարողները նորա բարեկամներն էին: Եզմիածնի հեռաւորութեան շնորհիւ մոռացաւ նա այնտեղի կեանքըն և օկսաւ վարել եկեղեցու իշխանի կեանք:

Երկար ժամանակ առանց հսկողութեան մի ընդարձակ թեմի տէր լինելով՝ նիւթական հարստութեան ճաշակն ևս առաւ, որի փշրանքներն Եզմիածին ուղարկելով և այնտեղից ժամանակին լատուկ շողոքորթական գովքերն ստանալով սկսեց կարծել, թէ անկախ իշխան է: Ղրիմի անրախո գաղթականների խնդիրն, ապա զինուրական գործառնութիւնների մասնակցութիւնը նըրան անգնահատելի գործիք դարձրին: Եղաւ մի ժամանակ, երբ նոր Ռուսիոյ փառաւոր կառավարիչը կամ Տաւրիկեան իշխանը խորհրդակից դարձրեց Յովսէփին իւր ծրագիրներին: Այդ շրջանը գագաթնակէտն էր Յովսէփ արհուոյ բարձրութեան, մի վայրկեան նա իրեն արդէն իսկ առանց ընտրութեան կաթուղիկոս և թերես մի բան էլ աւելի էր համարում: Արարատեան գահը իւր Պօտէօմկին գահակալով և աջակից Յովսէփ պատրիարքով... ինչ ընտրութիւն, ինչ մահսերական, այդպիսի մանր բաների մասին չարժէր մտածել:

Այդպէս էլ կարծում էր Յովսէփը, նոյնն էին մտածում և նրա բարեկամները, որոնք հաւատացած էին, թէ նա հայրապետական խղճուկ գահի համար չի թողնիլ իր փառաւոր, իշխանական ու հանգիստ կեանքը:

Սակայն բախտի անիւը շուռ էր եկել. չը կար Պօտեմկին, չը կար մեծ կալսրուհին իւր լայն ծրագիրներով, եկն նոր Փարաւոն, որ ոչ ճանաչէր զՅովսէփի... Բայց ոչ, ճանաչում էին Յովսէփին, սակայն ճանաչում էին իբրև արքեպիսկոպոս և ոչ այլ ինչ: Ահա ալժմ վճռեց նա կաթողիկոս դառնալ անպալման կերպիւ:

Թատերախաղին առաջին տեսարանի վարագոյրը բացուում է. Ղուկաս վեհափառի օրերն համարուած են, միաբանութեան ստուար մասը վճռել է խուսափել Յովսէփի ընտրութիւնից, իսկ նրա կուսակիցները չը գիտեն իրենց անելիքը, ուստի բեմ է դուրս գալիս դրանց պարագուխ Դաւիթն ու Հարցնում է Յովսէփին. «Հարկեցալ ի մտացս սոյն կարճ բանիւս զմիտս իմ ծանուցանել Հալրութեանդ, եւ նովիմք իմանալ զբոյդ միտու. բայց նախ՝ յիմս կողմանէ միամիտ լիցիս...» Յթուս դատարկ է ի Քեզապիսեաց, զի որդի ի տեղի հօր փոխանակեսցէ. և մեք թարց Զեր գիտութեան չկարեմք ինչ վճռել, և մանաւանդ ի քոյդ մտաց չունիմ ինչ տեղեկութիւն թէ արդեօք հաճիս գալ յայս կողմունս թէ ոչ, զի ի նոյն ջատագով եղէց...» (Եջ1—2).

Այս թղթի վրայ Յովսէփ արհին մակագրում է իւր պատաժանի իմտատը. «Եփրեմ Արքեպիսկոպոս եղբարին մեր ի սեպտ. 19 գրեալ է մեզ թէ սրբազան կաթողիկոսն վասն քո օգտի է զիս առաքեալ, որ ինքն արսօր վաղն է, նոյն կամքն և բոլոր միաբանիցն առ քեզ է... Յետ այսորիկ զիմարդ համարձակեն զալլ ոք ի տեղի մեր ընտրել...»:

Թանգագին է այս ծանօթութիւնը երկու պատճառով, նախ՝ պարզ յայտնում է Յովսէփի վճռական ցանկութիւնը կաթողիկոս դառնալու, երկրորդ Էջմիածնեցոց և Եփրեմի երկդիմի վարմունքն է պատկերացնում:

Այս օրինակ յառաջաբանից (prologue) յետու սկսում է բուն դրաման, ոյժերի մաքառումն:

Յունուարի սկզբին 1800 ամի Ս. Էջմիածնում կազմում է արևելեան Հայոց համազգալին ժողով, որի գիմաց Ս. Էջմիածնի ամբողջ միաբանութեան, մերձակալ վանօրէից, առաջնորդների, քաղաքների և գիւղերի քահանալից, մելիքների ու Հարիւրապետների (գիւղապեա), վաճառականների, արհեստաւորների ու բոլոր ժողովրդի առհասարակ մահսէրական թուղթ է գրում արևմտեան առաջապատիւ եղբայրութեան, Կ. Պոլսի պատրիարքին, առաջնորդներին, բոլոր հոգևորականներին ու աշխարհականներին, յատնում է Ղուկասու մահն և առաջարկում Դանիէլին հայրապետական գահը:

Այս համազգալին կոչուղ ժողովին մասնակցում էին պարսկական բռնութեան դարերում Ս. Եջմիածնի միաբանութեան հետ բոլոր շրջակալ վանքերի առաջնորդները, տեղական և մերձակալ քահաններ, մելիքները (ազնուական), իշխանք (յալտնի հարուստները), և գիւղապետները։ Սրան համատիպ էր և Կ. Պօլսի կամ արևմտեան աւագապատիւ հալութեան համագումարը, ուր պատրիարքի հետ մասնակցում էին մերձակալ թեմերի առաջնորդները, քաղաքի բոլոր հոգևորականները, աշխարհականներից ամերաները, սպաֆները, երեսփոխանները, վաճառականներն ու էսնաֆները։

Կան կարծողներ, որ այս համագումարները չեն կարող համազգալին ժողովներ կոչուել, և դրանց կատարած ընտրութիւնն ևս չունի համազգալին արժեք։ Այս, նոր ևրոպական մտքով ուղղել է արդ, բայց այն ժամանակների համար արդ ժողովներն անպայման համազգալին էին, որովհետև դրան մասնակցում էր ազգի այն ամբողջութիւնը, որի վրայ ծանրացած էր և աղքալին եկեղեցու պահպանութեան հոգսը։ Այդ ժամանակներում գոյութիւն ունէր նուիրակութիւնը, Եջմիածնում միշտ գտնւում էին քաղմաթիւ թեմեր շըրջած նուիրակներ, որոնք ներկայացնում էին և իրենց նուէրներով Ս. Եջմիածնինը պահպանող թեմերը։ Այդ միջոցներում աշխարհականի և հոգևորականի խտիր չը կար և աշխարհականները մտքներով պնդամ չէին անցկացնում, որ հոգևորականները առանձին շահեր ունին, տարբեր աշխարհականների շահերից։

Համեմատելով այս հին համագումար ժողովները ապագայ ժողովների հետ մինչև 1892 թ. չենք կարող ընդունել, որ նախկինները պակաս չափով ազգալին էին։ Անշուշտ մի մեծ լառաջադիմութիւն էր 1892 թուի ժողովը, որի նմանը երբէք չէինք ունեցել։ Զարմանալի զուգադիպութիւն, արդ միակ համազգալին ժողովը պարտական ենք այն եկեղեցականին, որ ամենից քիչ ժողովրդական էր, Խորէն Աշըրեանին։

Յունուարի 16-ին գրուած մահսերականը նշանակում է երկու ընտրելի, նախապատուապէս Դանիէլ

պատրիարքին և երկրորդապէս Նփրեմ արհւոյն, Ռուսա-
հայոց նուիրակին:

Կարգալով այս մահսերական թուղթը, դալիս ենք
այն եզրակացութեան, որ Եջմիածնի միաբանութիւնը
անպալման խոյս էր տալիս Յովսէփից: Ապագալ թղթե-
րում կը տեսնենք դրա պատճառը, առ այժմ նրանք
գրում են. «Քանզի նարդենիս երկոքին դոքա են հա-
ւանականք և հաճելի մեղ ամենեցուն»:

Ինչե՛ր անցան արդեօք Եջմիածնում նոյեմբերից
մինչև յունուար, Բնչ եղան արդեօք Յովսէփի կուսա-
կեցք, Բնչպէս եղաւ, որ Դաւիթ եպիսկոպոսն այնքան
ջերմ կուսակից ձևացաւ Դանիէլի, որ նրան պատգամա-
ւոր ընտրեցին և ուղարկեցին Գ. Պօլիս: Մի ենթագրու-
թիւն է մեղ հաւանական թուում, Յովսէփի կուսա-
կեցներն այնքան անզօր էին, որ լոելը բարւոք համա-
րեցին և կամ արտաքին ճնշումն այնքան զօրաւոր էր, որ
չը համարձակեցան ձայն հանել: Մի յաջողութիւն միայն
ունեցան Յովսէփիեանք, մահսերատար ընտրուեցաւ նրանց
պարագլուխ Դաւիթը, Սրանից պէտք է նորընտիր կա-
թողիկոսն իսանար ընտրութեան սպարագաներն, որ
ակնարկուած են Գ. թղթի մէջ էջ 8: Այս թուղթը
վկայում է, որ Յովսէփի ընտրութեան դէմ ուղղակի-
ռեծ է գրուած եղել, որովհետեւ Եփրեմ երկրորդ թեկ-
նածուի ընտրութեան մասին անգամ ասուած է. «.. թէ
յայնմ կողմանէ հիւսիսոյ կարի իմն դժուարին է հրա-
ւիրել զոր ի կաթողիկոսութիւն»:

Ըստրական թղթերի մէջ զուր ենք որոնում ընտ-
րեալների արժանիքի մասին ակնարկ, Եփրեմը կոչուած
է հեղիամբոյր, իսկ Դանիէլը բարեհամբաւ, արդարե-
շատ փոքր արժանիք հալրապետական գահն ամբառ-
նալու համար: Դանիէլն ուղղուած հրաւիրագրի մէջ
առաջին անգամ հանդէս է գտիս Ներսէս վարդապե-
տը, որ Ղուկաս կաթողիկոսի մահուանից մի քանի օր
առաջ Ս. Եջմիածին է հասնում, արժանանում է վե-
հափառի տեսութեան և մտիթարում է նրան յալտնե-
լով Դանիէլի ողջունները: Այս ողջունների հետ Ներսէս
վարդապետն յալտնում է և այն նուէրների մասին, որ

իւր հետ բերել էր Կ. Պօլսից թէ միաբանների և թէ Վեհափառի համար:

Անշուշտ այս նուէրներն իրենց գերը կատարեցին Դանիէլի ընտրութեան գործում: Այն մեծ ատելութիւնը, որով պատգայում հետևում էին Ներսէսին Յովսէփի անք և Դաւթեանք, բացատրուում է այս թանկագին տեղեկութեամբս: Ներսէսը հասնում է Բայազիտ Փարթամ նուէրներով, լուս է Ղուկասու մերձիմահ լինելը, թողնում է գանձերը Բայազէտ և անձամբ գալիս է Եջմիածին և ամենքին յայտնում, թէ Բնչեր է ուղարկել Դանիէլ պատրիարքն ամեն մէկի համար: Կաթողիկոսի մահուանից եօթն օր յետոյ հրամալում են Ներսիսին բերել իւր բեռինքը, բաժանել միաբանից անունով զրկուածները: Ահա թէ Բնչպիսի զուգադիպութիւն, Ղուկասը մեռնում է գեկտ. 28-ին, յունուարի ն-ին առաջարկում են բերել բեռինքը, որ անշուշտ բերուում է 8 ին կամ 10-ին, իսկ ընտրութեան մահսերականը գրուած է յունուարի 16-ին: Բացատրութիւնն աւելորդ է: Սակայն պաշտօնագիրը չէ կեղծում, Դանիէլն ընտրուած է իրեւ այր քարեհամրաւ: Ի՞նչ աւելի արտայատիչ մակդիր կարելի էր տալ այն անձին, որ չէր մոռացել իւր համբաւը տարածել նուէրներով: Դանիէլի մակդիրների մէջ աստուածաբան խօսքն անգամ չը կալ, որ այն ժամանակ շուալում էին տարապարտուց, ոչ իսկ գիտնական, որովհետև, ինչպէս կը տեսնէ իւրաքանչիւր ոք, նա հազիւ գրադէտ է: Դրան վկայ են նրա կոնդակի նմանհանութիւնը և ինքնուրոյն գրուած թղթերը:

Ներսիսի կատարած գերը Դանիէլի ընտրութեան մէջ շատ մեծ է եղել, դիւտնիս թղթերը պարզ պատկերացնում են ալդ, սակայն ալդ մասին յետոյ:

Սկսում է թատերախաղի երկրորդ տեսարանը: Առաջին ընտրութիւնից տասն օր յետոյ գալիս են Թիֆլիսից պատգամաւորներ ժողովրդի և վրաց թագաւորի կողմից և բռնադպտում Եջմիածնի միաբաններին ընտրութեան նոր թուղթ գրել Յովսէփի անուամբ: Ալդ թուղթը գրուում է 28 յունուարի և ճեպով հասցնուում Դաւիթ մահսերատար եպիսկոպոսին, Հետա-

քրքրական է, որ սրա տակ ստորագրում են միայն վեց եպիսկոպոս, միւսների կնքող պակասութիւնը ժամանակի սղութեամբ են բացատրում, իսկ ապագայում արդարանում են ասելով՝ որ այդ մահութականը քիչ ստորագրութիւններ է ունեցել, կեղծ է (թուղթ Դ. էջ 10—11) ¹⁾:

Այս երրորդ թղթիցն ենք իմանում, որ Դանիէլի ընտրութեան համար երկու անգամ ժողով է եղել (սինոգոս), ուր Յովսէփին էլ արժանի է համարուել հայրապետութեան, բայց շատ կասկածելի պատճառաց ոմանց որք յայտնի են, ի մահարիդ ոչ համարձակեցաք գրել զանուն նորաւ: Այժմ Եփրեմի անունը հանում են և նրա տեղը գնում Յովսէփինը, ուրեմն կըրկին Դանիէլն է մնում նախապատիւ ընտրելի: Նոյն պատճառաւբանութիւնն աւելի ընդարձակ գրում են Էջմիածնեցիք իրեն Յովսէփին, պարզ կերպով լիշտառակելով՝ որ մեր ազգը գտնուում է երկու մահմեդական տէրութեանց լշխանութեան մէջ և որ Յովսէփին երկուսի կողմից էլ թշնամի է նկատուած, որովհետև գրտնուել է պատերազմ վարող զօրավարների բանակում: Այդ բաւական չէ, միաբանութիւնը լիշեցնում է Յովսէփին, որ ինքը կամեցել է գալ Էջմիածին, բայց Զուբովի զօրքը հեռանալուց յետոյ վախեցել է, նոյնպէս լիշեցնում են նրան, որ հանգուցեալ կաթողիկոսը երկիցս հրաւելիր է Յովսէփին առ գործս երկուց մեծամեծ տեղեաց», բայց ինքը չէ կամեցել ճաշակել այլազգական լշխանութեան դառնութիւնը: Ահա և մի նոր մանրամասնութիւն Յովսէփի կեանքից, նա անտես է արել հայրապետի կրկնակի հրաւելը մեծամեծ պաշտօնների: Էջմիածնեցոց գրած հրաւելը երկիւղի արտալայտութիւն է, բայց ոչ համոզման և յարգանքի: Նրանք չեն քաշուում աւելացնելու իրենց գրութեան վախճանում: Քայլց եթէ երկիցես ի պատճառաւնացն լիշտառ-

¹⁾ Բնագրի ճոխստել իրեւ մակդիր Յովսէփի կամ իսան գարմունք է և կամ հաւանօրէն ծաղր ապագայ դրձի, որ յայտնի հակառակորդ է Յովսէփի: Հայր Մկրեանի ուղղագրութիւնը (Ճոխապատիւ) շատ հաւանական է:

կելոց թէ վտանգ լինի շքեղափառ անձինդ—, և սրբոյ աթոռում և ազգի մերում, և չկամիցիս գալ, առ այն ոչ կարեմք լինել նեղ մեղադիր»...: Այս հրաւէր չէ. դա կը նշանակէ, գալուստդ վտանգաւոր է ազգիս, աթոռին և անձիդ, այն էլ շքեղափառ անձիդ: Մնչքան տարբեր են Դանիէլին և Յովսէփին ուղղած հրաւէրները. պէտք է խոստովանել, որ Եջմիածնեցիք չը գետէին ծածկել իրենց զգացումները:

Ճիշտ այնպէս, ինչպէս թատերաբեմի Վրայ գործողութիւնն սկսում է հանգուցուիլ: Տեսարանի վրայ երեսում է ինքն հերոսը, Յովսէփ արհին: Թուղթ Զ—ԺԴ ելած են Յովսէփի գրչից: Աստիճանասրար սկսում է նա իւր անձը յատնել: Յովսէփին յայտնուել էին Եջմիածնի կարծիքն ու տրամադրութիւնը: Ահա նա դիմում է նախ Կ. Պօլսի պատրիարքին, իւր ախոլեան Դանիէլին, որին անուանում է «Գերալարգելի» ի Քրիստոս սիրեցեալ եղբայր և Աստուածաբան վարդապետ»: Ալստեղ պերճափառ արհին ամենայն գովասանք շռալում է Դանիէլին, իւր անձը ներկալացնում է նահատակ ազգի ցանկութեան, յայտնում է, որ երկու տարի առաջ նոյնը գրել է Զաքարիա պատրիարքին, այսինքն՝ եթէ ամբողջ ազգը ցանկանալ իրեն, ինչպէս Եջմիածնի միաբանութիւնը, արևելեան հայք, վրաց արքունին և Ռուսիոյ կալորը, ինքը կը հաճի նստել հալրապետական գահի վրայ:

Երկրորդ թուղթն ուղղում է նա Կ. Պօլսի ժողովրդին գրեթէ նոյն բօվանդակութեամբ և պնդելով թէ. «Մեք զայն կոշումն ո՞չ կամիմք լինել միայն ի թագաւորաց եւ ի կայսերաց, կամ յերեւելի իշխանաց եւ ի մարդկանց, այլ նախ՝ Աստուծոյ, և ապա ի բոլոր հասարակութենէ Հայկազուն Քրիստոսաւէր ժողովրդոց...» (էջ 20): Այս սկզբունքը քաջապէս պաշտպանելուց յետով, նա իւր անձն է ներկալացնում իբրև ժառանգդահի, որովհետև իւր նման «ժրաշան աշխատաւոր առթագաւորս և իշխանս և ենթակալ շնորհաբաշխութեան նոցին: և մանաւանդապէս ծերունի և աւագ եպիսկոպոս» չը կար: Ալսպէս է խօսում նա վետրուարի մէ-

կին, ստկայն ալլ լեզուով է բարբառում նոյն ամսի վերջին:

Ամենայն դիմակ մի կողմը գնելով և պատռելով համեստութեան քօղը, Յովսէփ արհին հանդէս է գալիս իւր երրորդ թղթում (թ. Ը.) ուղղուած Մինաս արքեպիսկոպոսին, կաթողիկոսութեան տեղակալին: Արժէ կարդալ այդ թուղթը Յովսէփ արհու հոգին ճանաչելու համար:

Վեհափառ հայրապետի մահուան լուրն առնելլ, հոգեհանգիստ կատարելլը, կալսեր իմացումն տալն ու գազեթի եղեալ հոչակել տալն յայտնելուց լետոյ գրում է առնպատրուակ քանիւ լսել եմ, որ մէկին (զմի ոք) հայրապետ էք ընտրել, դու և ներսնայիններից ոմանք ինձ ձախն էք տուել, շնորհակալ եմ. երկու տարի է Կ. Պօլիս, Էջմիածին և Վրաստան իմ մասին են խօսում, Եփրեմ արհին էլ երկու անգամ գրել է ինձ, որ եկել եմ քեզ Աթոռ մտցնելու համար, երբ հայրապետը մեռնի, այս բոլորից լետոյ «ոչ էր մարդ միաբանիցն մերոց, ընդ մերս անուան դասել եւ զայնպիսի անուն, որով նախատինք վերաբերի սրբոյ Գահիդ և Ազգին: Ալլ դու իմաստասիրեան, միթէ ոչ գոյ Աստուած Խորակէլի, որ երթան պաշտել ԶձԱնձիկն»:

Այսպէս իւր բարկութիւնը թափելով առաջին ընտելու վրայ, երկրորդի մասին ասում է «Հսկ միւսն անյիշելի է այժմ եւ յապայն»: Յայտնում է պարզօրէն, որ ինքը Վրաց արքայից և մեր ազգի նախարարներից հրաւիրուած ու կալորից նշանակուած է, մի մեծ բեռն է բարձում ազգի վրայ, որ յօժարել է թողնել իւր հանգստութիւնն ու փառքը և իւր անձը զոհել է Աթոռին: Ապա Մինաս արհուն նշանակում է իւր տեղապահ, իսկ Յօվհաննիսին ու Դաւթին վէքիլ և հրամայում է սպասել իւր գալստեան: Թղթի վերջը ցանկութիւն է լայտնում պարսկական ռազմ և օսմանեան ֆէրման ստանալու (ցյոյժ բարութ լինէր»):

Ահա կանգնած է մեր առաջ շքեղափառ Յովսէփ արհին, բերնով ազգային իրաւունքների պաշտպան, իսկ երօք հայրապետական գահի վրայ բռնացած, առանց

ընտրութեան և առանց ազգից ճանաչուելու արդէն
կարգադրիչ էջմիածնի՞:

Աւելի ևս անպատրուակ լեզուով է խօսում նա
Եփրեմին գրած թղթում (թուղթ թ. էջ 28—30):
«Նախ՝ ամօթ միաբանիցն, երկրորդ՝ ամօթ իշխա-
նացն, երրորդ համօրէն ազգին... որ Յովսէփին չեն
ընտրել: «Ես զնոսա ճանաչելոց չեմ որպէս կաթուղի-
կոս, այլ իբրև զմի ի լիրք բոնաւորաց և լարծաթոլ
ընտրելոց: Թէ ինչ աստի ծնանի՝ իմաստամիրեան և գրեա
յնթոռնա:

Եթէ պերճ արհին իմանար, որ այս թուղթը մի
օր լետագալք կարդալու են, կը գըէր արդեօք: Կարծեմ
թէ այս: Մերկապարանոց կանգնած է մեր առաջ Յով-
սէփ արհին, նա հայրապետական գահը ժառանգելու
համար ամենալին օրէնք, որբութիւն և աւանդութիւն
ոտնտակ է տալիս. «ամենամեծ կայսրն և Վրաց արքայն
ալժմ ճանաչեն զիս Պատրիարք ամենալին հայոց»:

Նոյն ոճով շարունակում է լոխորտալ, գեսպանին
գքուած է Կ. Պօլիս ինձ ընտրել տալ, Վրաստան գը-
րուած է «և մի զոք մուծանել ի լայն Աթոռնա: Եփ-
րեմ պատուիրում է գըել Դանիէլին մնալ իւր տեղում,
եթէ ճանապարհին է, կանգ առնել «Եթէ ոչ հաճնացի,
հրով ծախեն զսուրը Աթոռն եւ լինի ամբարիշտ իսոռ-
վարկու եւ ապօրինաւոր զռնաւոր. ես չեմ մեղաւոր»:
Այս է փառասիրի տրամաբանութիւնը. միաբանութիւ-
նից և ազգից ընտրեալ կաթողիկոսն եթէ գահ ամբառ-
նալ ապօրինաւոր զռնաւոր է: Նամակը վերջացնում է
յայտնելով՝ որ Վրաց երկրում և Ռուսիայում ինքը ու-
թիշ կաթողիկոս չի ճանաչելու:

Կոիւ է յայտարարուած ո՛չ ի կեանս, այլ ի մահ: Յովսէփը վերջնագիր (*ultimatum*) է ուղարկում միաբա-
նութեան և ազլսեցոց, կուզէք ընտրեցէք ինձ կաթու-
ղիկոս, չէք ուզիլ ես Աթոռն այրել, աւերել կը տամ,
ինքս էլ վրաց և ոռուսաց երկրներում, ուր ամենազօր
եմ, բացի ինձնից ուրիշ կաթողիկոս չեմ ճանաչիր:

Կոռիւ սաստկութեան մէջ մարդիկ մոռանում են
ամենալին ինչ և արտայալաւում իրենց իսկական եսը,
երբեմն ալդ լինում է մինչև իսկ ի վնաս սեպհական

անձի: Այս կէտին է հասել Յովսէփ արհին: Նրա մէջ ոչ մի զգացմունք, ոչ մի գտառդղութիւն և խելամտութիւն չէ կարողանում ի վեր ամբաւնալ, ես ամենազօր եմ, ես, կաթողիկոս, ամօթ, ամօթ ձեզ, որ ինձ չէք գնտհատում:

Կուղէի այս յախուռն պահանջի մէջ մի հիմնաւոր փաստ գտնել, մի օրինական հիմունք, ապագայի մի խոստմունք, որով ազգն համոզուէր նրան կաթողիկոս կարգելու: Զը կայ, չը կայ և ոչ մի ուրախառիթ խոստումն, մի հիմնաւոր փաստ: Մի քանի միաբաններ ու իշխաններ երկու տարի է ինձ յուս են տուել, ահա նոյն հիմունքը, որ կրկնում է Յովսէփ արբանեակներով, սակայն ազգին ու եկեղեցուն բնչ, ով էր նրանց հաւատարմագիր տուել այդ անելու: Եթէ այդ հիմունքը չը կայ, կայ արդեօք մի յուսալի խոստումն ապագայի համար: Ոչ, բայց ներողութիւն, ահա այն որպէս երեխ մեծ թագաւորն ունի կամս մեծ շքօք առաքել զմեզ, ըստ որում նոր է ալսա:

Յովհաննէս արքեպիսկոպոսին գրած նամակի մէջ յալտնում է Յովսէփ: «Երբ բոլոր Եւրոպիո թագաւորքն չկարացին սմա գէմ կալնուլ, միթէ ողորմելի և տարաբախտ Ազգն մեր և միաբանքն քսուք, կարեն ընդիմանալ հզօր հրամանի սորա»: Ուրեմն պարզ է, որ Յովսէփը անվիճելի գահակալ է, ուստի իրաւունք է համարում իրեն արդէն իրըև հալրապետ հրամալել ս. գեղարդը թողնել Թիֆլիզում (յանենայն դէպս, եթէ չը լաջողի եջմիածնի գահը բարձրանալ, իբրև Վրաստանու և Ռուսիոյ կաթողիկոս ալդ մասունքն ունենալ ձեռքում) գնալ եջմիածնին և Մինաս արքեպիսկոպոսի և Դաւթի հետ ստանձնել աթոռի վարչութիւնն, «զի ահա պատրաստի տեսանես զմեզ ուղևորելոր»:

Խրոխտ արհին, որ իւր թղթերի տակ նուաստ սպասաւոր, խոնարհ աւելածու սըզոյ Աթոռին եւ խոնարհազյն ծառայ էր ստորագրում. ապրիլ ամսին արդէն յանդգնում է ԿԱԹՈՒԼԻԿՈՍ ստորագրել, Խւր ընտրութիւնը վաւերացնել տալու համար նա մի փորձ և անում է, կրկին դիմում է Դանիէլին, ճգնում է ապացուցանել, որ գահն իւրն է ըստ ճշմարտութեան (?)».

ըստ հնութեան և ըստ աշխատանաց, Կարապետ վարդապետին մեծաօսստ թղթով կ. Պօլիս է ուղարկում և սպառնում է մի այնպիսի հրդեհ, որ ամենքին ալրէ: Կարապետ վարդապետին գրած նամակի մէջ Յովսէփին ասում է. «Սրբազն Պատրիարքն պատիւ եւ փառք համարեսցէ ի ժամանակսիմ Պատրիարք գոլն իւզ՝ ՄԵԾԻ քաղաքին և ցուցէ առ իս գորդիական և զեղբալրական սէր... թէաչտ իմս իղձ էր ի վերայ Պօլսոյ անցանել, սակայն գիտեմ հաստատապէս ծանը լինի լուժ և յամէ գնալն իմ ի սուրբ Աթոռոն (թէաչտ օգտութիւնք բազում յառաջանան անտի սրբոյ Աթոռոյն և Ազգին), այս կարի զհաճութենէ իշխանացն և ազգին... էջ 38—99:

Այս գրութիւնն լիրաւի քաղաքագիտական է, երեսում է արհիս սովորել էր դիւնագիտական լեզուն և ոճը, նա իբրև մի փորձ առաջարկութիւն է անում պօլսեցոց հրաւիրել իրեն Պօլսով գնալու Ս. Եջմիածին, սակայն անվստահ է և կարծիքներ է կամենում իմաստալ:

Այս երկրորդ շրջանի բանակցութեան մէջ թուում է ինձ կայ մի շատ կարևոր հանգամանք, որ ցարդ նկատի չէ առնուած. Ցովսէփը գրում է Դանիէլին. «Լքի թողի զամենայն աստ եղեալ պատիւս և զփառս իմ և զհանգստութիւնս» (էջ 33), այն չէ նշանակում որ իրօք նրա դրաւթիւնը փոխուած էր, որ նա հրաժարուել էր իւր առաջնորդական պաշտօնից և եթէ կաթողիկոս չը դառնար, պիտի մնար սոսկական միաբան. եթէ արդպէս է, նա բոլոր նաւերն այրած լինելով, վերադարձի հնար չունէր:

Պատկերն ամբողջացնելու համար պիտի լիշտապետ և Յովսէփի Լազարեանին գրած թուղթը, ուր նա խոնարհ և երախտագէտ ոճով շնօրհակալութիւն է անում Յովհաննէս Լազարեանին իրեն արած բարերարութեանց համար և ստորագրում է խոնարհ ծառալ Յովսէփի արքեպիսկոպոս Ոռուսաց երկրի Հայոց Ազգին՝ ԽԵԽԱՆ Երկայնաբազուկ Արդութեան եւ կավալեր:

Տեսարանը փոխուում է. դարձեալ Մայր Աթոռն է հանդէս գալիս և մի նոր մահսերականով Դանիէլին է հրաւիրում, ուր պարզապէս ասուած է, որ Յովսէփի լուսած

ընտրութեան մահսերականը գրուած է «ակամալ և քռնաբարութեան բռնաւորաց»¹⁾ (էջ 42): Նոյնը կը ըստ նուած է Դանիէլին ուղղած թղթի մէջ (ՓԵ.), ուր արտալայտում է մէաբանութեան խօճուկ և երկչոտ դիրքը, բայց միանգամայն և ատելութիւնը դէպի Յովսէփի: Միաբանութիւնը վճռում է թողնել բոլոր պատասխանատութիւնը պօջսեցոց վրայ, ում զուք կընդունէք կտթողիկոս, մենք էլ նրան կը ճանաչենք: Պաշտօնական գրութիւններին հետևում են մտերմականները, նախ հանդէս է գալիս ծերունազարդ և ամենից հաւասարապէս յարգուած Մինաս տեղապահը:

Այս ծերունազարդ արհին ալնքան հեղինակաւոր անձն է, որ Յովսէփին ասում է նրա մասին. «Ես զՄինասն ծեղապահ եմ կարգեալ ըստ բանի Արքային, և ամեն ինչ նմա գըեալ, եթէ զնա կացուցանէին, չունէի ինչ ասելոյ, զի ես զնա միշտ հալը եմ ճանաչեալ» (էջ 29—30):

Մինաս արհին ժամանակի միաբանութեան մէջ պամենից հեղինակաւորն էր, վրաց արքան նրան է առաջարկում տեղապահ և Յովսէփին հաստատում է, Դանիէլն ու Պօլոու աղգալինք նրան են տեղապահ համարում, ինչու: Արդեօք ինչից վրայ էր հիմնուած ալդ հեղինակութիւնը. ծերութեան, գիտութեան թէ անձնական ալլ արժանիքի: Դժբախտաբար ալլ գրութիւններ չունինք նրանից, իսկ իւր թուղթը (46—47) մի գեղցիկ ճարտասանական նամակի օրինակ է, որ մեզ չէ բանում գրողի սիրտը: Այս հարիւրաւոր նոյնանման անգրագէտ նամակների մէջ Մինաս արհու գրածը միտկ գրականական ոճով գրուածն է, ուր քերականական մեղանչումներ չը կան, բայց որն և միջնադարեան ճարտասանութեան քողի տակ ծածկում է գրողի սիրտն ու հոգին: Ժամանակի գէկագէնտական ոճով նա այսպէս է սկսում. «Մէր մեր՝ սիրածարծ սիրոյդ սիրելութեան՝ սիրով գըեալ և ողջունաբեր ողջացուցիչ ողջունիդ նամակ... և ալլն ալսպիսի բառակուտակութիւն: Միաբա-

¹⁾ Վրաց թագաւորների և իշխանների նամակները Էջմանականներին

Նութեան ժթ-բորդ թղթից, որ ուղղուած է Յովսէփին, իմանում ենք, որ Մինաս արհին Ղոկասի մահուանից յետոյ առաջին եպիսկոպոսն է եղել աթոռում, նրան կոչում են աշխատաւոր, օգտախոհ և բարեջան, խոհական բռնաւոր և իմաստուն վարդապետ։ Արդեօք ըրի կուսակիցն էր սա. անկեղծաբար Դանիէլինը, իսկապէս սրա համար գահն էր սիրելի և անտէրութեան նեղութիւններից ընկճուած, երբ միաբանութիւնը խանի մօտ էր գնացել Յովսէփին հրաւիրագիր ուղարկելու, վշտից հիւանդ պառկած, մնացել էր աթոռում, ուր և մեռաւ հոկտ. 24 ին 1800 թ։ Ալսպէս անհետացաւ կուսակցութիւններից վեր կանգնած մի անձն և ասպարիզում մնացին բուռն կրքերով լի ախորեանները ¹⁾։

Այդ միջոցին Յովսէփ արհին հասել էր իւր նպատակին, Դանիէլ պատրիարքն աքսորուել էր, կաթողիկոսութեան ֆէրման ստացուել էր և չօծուած վեհափառն արդէն վարդապոյն հայրապետական կնքով կոնդակներ էր գրում (էջ 52)։

Անկանոն ընտրուածը սկսում է իւր նորօրինակ ընթացքը։ Ազգի վրայ իւր հայրապետութիւնը բռնի կերպով հաստատել տալուց յետոյ, նա արհամարհում է և Աստուածային շնորհը։

Ս. Օծումը դեռ չընդունած ոչ ոք կաթողիկոս չէր տառագրել ցարդ, ոչ ոք հայրապետական կնիք չէր դրումնել իւր թղթերի ճակատին մինչև Ս. Էջմիածին հասնելը, ոչ ոքի անուն չէր լիշուել ս.՝ պատարագին։ Յովսէփը, որ ազգից չէր ընտրուած և ս. Հոգուց չէր կոչուած, հաւասարապէս սկսաւ արհամարհէլ երկուսն էլ և կարծում ենք, որ շատ սրտաշարժ լանդիմանու-

¹⁾ Մինաս արհւոյ մինչանաւոր գործն էր չօծուած կաթուղիկոսի անուան յիշատակութեան ձեւակերպութիւնը. Յովսէփը հրամայել էր և ամեն տեղ սկսել էին յիշել նրա անունը, ըստ Ս. Էջմիածնում տեղապահը չէր թոյլ տուել և նոյնը գրել Յովսէփին պատճառաբանութեամբ, ապա երեխ ընկճուելով մեծասասա հրամանից կարգադրել էր յիշել նրան հանգուցեալ Պատկասի անուան հետ միասին. Սա մի շատ բնորոշ է իմաստուն վճիռ էր։

թիւն է նրան միաբանութեան հրաւէրը, ուր պարսից գօրքերի աւերմունքից պրծած միաբանութիւնը պատմելով իւր արկածները, գրում է «և տեսեալ զվարդագոյն դրոշմ Հայրապետական նՈՐԱԿԵՐԸ կնքորդ և...» Աւելի սրտաշարժ է միաբանութեան միւս թուղթը (ժթ.) «... յարտաքուստ յումեքէ դանկ մի չէ մտեալ ի սուրբ տունս... ի քանի վիճակս եպիսկոպոս ոչ գոյ, ... սպասադքն շլացան դիտելով ի ճանապարհս կաթողիկոսին Ա. և Պօլսու նուիրակն ի մետաղս և չորք վիճակք ևս ի տէրութեան օսմանցւոց ահա երիս ամս տռանց նուիրակի են... Սըբալոյս մեռոնն ևս նուազեալ է մերձ ի սպառումն...» (էջ 57):

Այս խօսքերը ժամանակի խոնալհութեան ոճով մի կծու յանդիմանութիւններ են, սակայն Յովսէփ արհին չէր հոգում այդ ամենի մասին. նա յաղթական գնացքով էր կամենում տեղ հտանել:

Թատերախաղն աւարտուում է, վերջին տեսարանի վարագոյրը բացուում է. չօծուած արհին քահանայապետական օրհնութիւններ է բաշխում, վերջնական շնորհակալութեան թուղթ է ուղղում. Աղէքսանդր Ա. կայսեր և հրաժեշտ է տալիս իւր թեմին, որի համար ապագայ առաջնորդ է մատնանիշ անում իւր ձեռնասուն Գրիգոր վարդապետին (հանգեաւ հոգի Եղիալի ի վերալ Եղիսէի), ապա Դաւիթ Դանիէլեան կոուի ստեղծողին. Կրկին աղերսանքի հառաջանք է ուղղում նորակոչին գալ փրկել Մայր Աթոռը, սակայն նա չէ աճապարում, իւր հաւատարիմ արբանեակ Դաւթին վեպասանում է իւր մեծամեծ գործերը, եկեղեցիներում պատարագին իւր անունը իշշել տալը, օրհնութեան կոնդակներ գրելը, վերջապէս աքարեալ Դանիէլի վիճակը թեթևացնելու մասին հոգալը. Զէ մոռանում և յարտարաբելու, որ սպասում է օկալսերավալել տրոց և յատկան պարգևաց, որպէս զի ուղեորուի Էջմիածին: Նամակի վերջը խոստանում է չը մոռանալ Դաւթին իւր ազգականներով:

Կալսերավալել պարգևներով շքեղացած, զօրքերով և իշխանական պատիւներով շրջապատուած արհին իշնում է Կովկասեան լեռներից և ով Աստուածալին տնօ-

թէնութեան, ալդտեղ, Վրաց մալրաքաղաքում վախճան-
ում է 1801 թ. մարտի իննին։ Վարագոլը իջնում է։
զարմանալի ճակատագրատկան վախճան է ստանում Յով-
սէփի կաթողիկոսութիւնը։ Նա, որ տէր էր կամենում
լինել էջմիածնին, կենդանութեամբ նրա հողին էլ չէ
արժանանում։

ԴԱՒԻԹ. ԴԱՆԻԵԼԵԱՆ ՇՓՈԹԻ ՇՐՋԱՆ

(1801—1809)

Ա

Կեանքի դրամաներն անվերջ են. մինի վարագոլը ընկաւ թէ չէ, միւսինն է բարձրանում։ Յովսէփի դիա-
կը դեռ չէր սառել, երբ նոր դրամայի լառաջաբանն է
սկսում. խմորում է Դաւիթ Դանիէլեան շփոթը։

Յովսէփի ձեռնասունն ու նրա առաջնորդութեան
լաջորդ Գրիգոր վարդապետը, չափելով իւր ոլժերն,
սկսում է հալրապետական գահը վիճելի դարձնել։ Գրի-
գոր վարդապետն իւր ձեռքին ունէր Յովսէփի ժողոված-
անբաւ գանձերը, գիտէր ուստերէն լեզուն, ծանօթ էր
ուստական օրէնքներին, կապեր ունէր նրանց հետ և
շնորհիւ Արդութեանների շնորհ էր գտել և Վրաց
արքունիքի առաջ։ Այս բոլորի հետ նա ունէր և հան-
գուցեալ արհուոյ բարեկամների զօրաւոր խմբեր թէ Ս.
Էջմիածնում և թէ Կ. Պօլսում։ Այս զէնքերը բաւա-
կան համարեց նա նոր պալքար հրատարակելու և Յով-
սէփի բերանացի կտակի կատարող ձևանալով, կաթողի-
կոս դարձեց Դաւիթին։

Կրկին հանդէս եկաւ Դանիէլը, Ազգն ու Էջմիած-
նի միաբանութեան մեծամասնութիւնն ազատուելով
Յովսէփից շունչ քաշած կարծեցին իրենց և փութով
նուիրակ ուղարկեցին Դանիէլին Թոխաթից, իւր աքսո-
րավալից բերելու, սակայն մինչեւ նրա գալուստը Ս.
Էջմիածնում գահ նստաւ և բռնութեամբ օծուեցաւ
Դաւիթը։

Զինաթափ չեղան Դանիէլեանք. նրանք էլ Ալաշ-

կերտու Երեքխորան (իւչքիլիսէ) վաճքում օծեցին Դանիէլին:

Սկսաւ մի խալտառակ պալքար: Կաշառն օտարներին, ծեծ ու բանտ իւրալիններին սովորական դարձաւ, բայց կրկին յաղթող հանգիսացաւ դիւանագիտութիւնը, որի թեւերն ալժմ անցաւ Դանիէլեանների ձեռքը շնորհիւ Մինաս Լազարեանի և Եփրեմ սրբազանի:

Այս երկրորդ դրաման բազմաթիւ զզուելի պատկերներ ունի, որ հրաւիրում ենք ընթերցողին անձամբ կարդալ, իսկ մենք գործող անձանց մի քանիսի ստուերագծերը նկարագրելով ենք կամենում գոհանալ:

Ալդ գործիչներից շատերն հին են, ինչպէս Դառվիթն ու Դանիէլը, Եփրեմ սրբազանը, Թամարով գեսպանը, Գէորգ Աղայեկովը կամ Եազըջը Գէորգը, ոմանք նոր, ինչպէս Գրիգոր եպիսկոպոսը, Մինաս Լազարեանը, Յովհաննէս և Գրիգոր պատրիարքները, Մելիք Արքահամն և ամբողջ մի դաս հոգևորականների ու աշխարհականների:

Ն. ՔՍ.ՐԱ.ՄԵԱ.Ն.

(Կը շարունակուի)